ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2024 թվականի N 8653-Ա

ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Մասիս համայնքի Այնթապ գյուղում գտնվող Աբով Կարապետյանին և նրա ընտանիքին պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0,31936 հա, որից 0,28 հա օրինական է և հատկացվել է Աբով Կարապետյանին և նրա ընտանիքի անդամներին:

Առկա է հատկացումից ավել օգտագործվող 0,03936 հա մակերեսով հողամաս, որը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, դրա նկատմամբ փաստացի տիրապետողների անհատույց սեփականության իրավունքի ճանաչումը բավարարում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, և 3 ենթակետերով սահմանված պահանջներին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշմամբ, տնտեսության թիվ 10 գրքից, գրանցման թիվ 438 քաղվածքը և քաղաքացի Աբով Կարապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1.Մասիս համայնքի Այնթապ գյուղում գտնվող գյուղատնտեսական նշանակության օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 0,03936 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, և 3 ենթակետերի համաձայն ճանաչել քաղաքացիներ՝ Աբով Սարգսի Կարապետյանի (ծնված՝ 02.07.1954թ. անձնագիր՝ AR 0304887 տրված՝ 25.03.2017թ. 044-ի կողմից), Գայանե Արխիմանդրիտի Կարապետյանի (ծնված՝ 10.06.1958թ. անձնագիր՝ AS0406857 տրված՝ 25.10.2018թ. 044-ի կողմից), Նվեր Աբովի Կարապետյան (ծնված՝ 31.05.1989թ. անձնագիր՝ BA 3464068 տրված՝ 30.01.2019թ. 044-ի կողմից) և սեփականության իրավունքը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հատակագծով (կցվում է) :

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 թ.
Ք.ՄԱՍԻՍ